

Այրապետանի նախագահ Հայտար Ալիեի երկն ընդունեց Պաքուի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ռոս Ուիլսոնը: Հանդիպման ընթացքին Ուիլսոն Ալիեի յայտնեց, թէ նախագահ Ճորձ Պուշ «մեծ հետաքրքրութիւն կը ցուցաբերէ Այրապետանի նկատմամբ», եւ թէ ան մտադիր է 2002ին հասնիլ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման: Պուշ նաեւ կը փափաքի, որ Հայտար Ալիեի եւ Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի միջեւ հանդիպումները՝ տագնապի լուծման շուրջ շարունակուին:

Հայտար Ալիեի իր կարգին դեսպանին հաւաստիացուց, որ Հայաստանի եւ Այրապետանի ղեկավարները կը շարունակեն ուղղակի բանակցութիւնները Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման առնչութեամբ:

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE

أزتاك جريدة يومية سياسية وأدبية - البيرة المؤجلة، إيشادرويشيان

1500 L.Ո. 74ԳԻ-ՏԱՐԻ, ԹԻԻ 256 (21012) ՉՈՐԵՔԵԱՐԹԻ, 16 ՅՈՒՆՈՒԱՐ 2002 10 ԷՁ

ՆԱԽԱԳԱՀ ՉՈՐ. ԷՄԻԼ ԼԱՀՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՔՈՆԿՐԵՍԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՅԵՅՐ ՊԱՏՐԻԱՐՔԸ

Հանրապետութեան նախագահ Չոր. Էմիլ Լահուտ երկն Պապատյոյի նախագահական պալատին մէջ ընդունեց այցելութիւնները ամերիկեան Քոնկրէսի պատուիրակութեան եւ մարոնիներու Մար Նասրալա Պուլթրոս Սֆէյր պատրիարքի:

Նախագահ Լահուտ ամերիկեան Քոնկրէսին մէջ դեմոկրատական փոքրամասնութեան ղեկավար Ռիչըրտ Կէպլարտի զլխաւորած պատուիրակութիւնը ընդունած ատեն ներկայացուց Լիբանանի տեսակէտը շրջանային եւ միջազգային զարգացումներուն առնչութեամբ, կեդրոնանալով Միջին Արեւելքի իրավիճակին, ինչպէս նաեւ Լիբանանի սկզբունքային կեցւածքին վրայ, որ կը դատապարտէ ահաբեկչութիւնը, եւ միաժամանակ ահաբեկչական արարքները կը գամազանէ ժողովուրդներու պայքարներէն եւ իրենց հողերը ռոնազարուածն ազատագրելու իրաւունքէն:

Նախագահ Լահուտ նաեւ ներկայացուց արաբ-իսրայէլեան հակամարտութեան գծով Լիբանանի կեցւածքը եւ դիտել տուաւ, որ վայրագութիւններու շարունակումը շրջանային տագնապի լուծման ուղղութեամբ դրական գարգացում չի թոյլատրեր, այլ անհրաժեշտ է վերսկսել բոլոր առանցքներուն (լիբանանեան, սուրիական եւ պաղեստինեան) վրայ բանակցութիւններուն, հասնելու համար արգար, ամբողջական եւ վերջնական խաղաղութեան, որ պէտք է հիմնուի Մատրիտի մէջ հաստատուած սկզբունքներուն եւ յատկապէս պաղեստինցի գաղթականներու տունդարձի իրաւունքի երաշխաւորումին վրայ:

Նախագահ Լահուտ նաեւ պատասխանեց ամերիկացի խորհրդարանականներու հարցումներուն, որոնք կը վերաբերէին ահաբեկչութեան եւ անոր դէմ պայքարին առնչութեամբ Լիբանանի կեցւածքին, ինչպէս նաեւ լիբանանեան սուրիական յարաբերութիւններուն: Այս առնչութեամբ նախագահ Լահուտ ըսաւ, որ այդ հարաբերութիւնները մասնաշատուկ են, որովհետեւ ըրու գաղնակից պետութիւններու միջեւ են եւ հիմնուած՝ անոնցմէ իւրաքանչիւրին գերիշխանութեան եւ անկախութեան նկատմամբ փոխադարձ յարգանքներ վրայ:

Շար.՝ էջ 10

ՊԱՂԵՍՏԻՆԵՒԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՏԱԳՆԱՊ ԷՏ. ՓԷ. ԷԼ. ՓԷ.Ի ՂԵԿԱՎԱՐԸ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԵԱՒ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՈՍՏԻԿԱԼՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ



Ֆաթիհ ղեկավար Ռաէտ Զարմիի ղիակը ուսամբարձ կը տարուի իր զինակիցներուն կողմէ:

Պաղեստինեան ոստիկանութիւնը ձերբակալած է պաղեստինեան Է.Փ. Փէ. Էլ. Փէ. Կապուկերպուրթեան ղեկավար Ահմետ Սաաուաթը, Ռամալայի մէջ: Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի բանբերը հաստատեց, սակայն, թէ տեղեակ չէ այս լուրին: Միւս կողմէ, պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատի ղեկավարած Ֆաթի շարժումը յայտարարեց, որ հաստատ կը պահէ պինդութիւնը՝ անտեսելով պայն խախտելու կոչերը:

Արաֆատի յայտարարած պինդութիւնը փոքրաւոր հարուած մը ստացած էր Երկուշաբթի օր, երբ Թուրքիայի մէջ ակաւա-հարումի մը զոհ գնաց Ֆաթիի ծայրայեղական մը, որ կը պահանջուէր Իսրայէլի կողմէ: Պաղեստինցիները ծայրայեղական սպանութիւնը վերագրեցին Իսրայէլի: Թուրքիայի գործողութեան քանի մը ժամ տեւք, պաղեստինցիները հակադարձեցին 19 տարեկան իսրայէլացի պինդութիւնը մը սպաննելով եւ սպաննելու մըն ալ վիրաւորելով:

Շար.՝ էջ 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՌՈՊԵՐՏ ՔՈՉԱՐԵԱՆ ՉՂՆԴՈՒՆԵՑ ԹՈՒՐՔ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ

Հայաստանի նախագահ Ռոպէրտ Քոչարեան ծառայութիւնը տեղեկացուց, որ նախագահ Քոչարեան մերժած է ընդունիլ թրքական «Հիւրիյէթ», «Ճումհուրիյէթ», «Թըրքիշ Տէյի Նիուզ» թերթերու եւ «Թուրք Հապէր» լրատուական գործակալութեան լրագրողները, որովհետեւ թուրք լրագրողներ Հայաստանի նախագահին հետ կատարուած իւրաքանչիւր հանդիպում ազատագրուած ձեւով կը ներկայացնեն իրենց մամուլին մէջ:

Նախագահ Ռոպէրտ Քոչարեանի ծառայութիւնը աւելցուց, որ այդպէս եղած է «Հիւրիյէթ»-ի, «Միլիյէթ»-ի եւ «Սի. Է. Է. Է. Թուրք» լրագրողներու կատարած հարցազրոյցներու պարագային, եւ հայկական կողմը իւրաքանչիւր անգամ ստիպուած եղած է նախագահին իրական պատասխանները վերստին հրատարակելու:

Նշեալ թուրք լրագրողները, որոնք Երեւանի Մամուլի Ակումբին հրաւերով 11 Յունուարէն ի վեր կը գտնուին Հայաստան, 12 Յունուարին այցելած են Սեփանակերտ: Յունուար 14ին Երեւանի մէջ կայացած է «Կլոր սեղան» մը՝ «Հայ-թրքական յարաբերութիւններու լուսաբանումը երկու երկիրներու լրատուամիջոցներուն մէջ» նիւթին շուրջ:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Ջիւնիկ Աղաջանեան ողջունած է բանակէ-ճին կայացումը եւ ընդգծած է տեղեկութիւններու առարկայական լուսաբանման անհրաժեշտութիւնը: Իր կարգին, Երեւանի Մամուլի Ակումբի նախագահ Պորիս Նաւասարդեան յայտնած է, որ կը նախատեսուի հիմնել համացանցի կայք, ուր պիտի տեղադրուին հայ-թրքական յարաբերութիւններու վերաբերող նիւթեր:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ ՀԵՏ

ԵՐԵՒԱՆ (Հ.Յ.Գ. ՄԱՄԼՈՅ ԴԻԻԱՆ, 15 ՅՈՒՆՈՒԱՐ 2002).- Հ.Յ.Գ. Բիւրոյի անդամ եւ Հայաստանի Ազգային ժողովի պաշտպանութեան, անվտանգութեան եւ ներքին գործերու յանձնաժողովի նախագահ Վահան Յովհաննիսեան երկն՝ Երեքշաբթի, 15 Յունուար 2002ին, հանդիպում ունեցած է Հայաստանի մէջ Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպան Մոհամմէտ Ֆարիադ Քոլէյնիի հետ, վերջինիս իրաւէրով: Հանդիպման ներկայ եղած է նաեւ դեսպանատան քաղաքական բաժնի պատասխանատու Հաշէմին:

Շուրջ երկու ժամ տեւած հանդիպման ընթացքին, արծարծուած են Հայաստան - Իրան յարաբերութիւնները եւ այդ գծով դեսպանատան տարած աշխատանքները՝ երկու երկիրներու միջեւ տարբեր բնագաւառներու մէջ յարաբերութիւնները վարպահելու ուղղութեամբ: Քննարկուած են նաեւ երկու երկիրներու խորհրդարաններուն միջեւ համագործակցութիւնը խորացնելու ուղղութեամբ ընթացքի մէջ եղող նախաձեռնութիւնները, ինչպէս նաեւ՝ շրջանին մէջ տեղի ունեցող իրադարձութիւնները:

ՀԱՆԴԻՊՈՒՄ Ս. Դ. Հ. Կ.Ի ԵՒ Հ. Յ. Դ.Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՄԻՋԵԻ

Երէկ, 15 Յունուար 2002, երեկոյեան ժամը 6:00ին, Հ.Յ.Գ. «Երեւանեան» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Ս. Դ. Հ. Կ.Ի Լիբանանի Շրջանային վարչութեան եւ Հ.Յ.Գ. Լիբանանի կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչներուն միջեւ հանդիպում մը:

Խորհրդակցութիւնները կեդրոնացան լիբանանահայ գաղութը յուլոյդ հարցերուն վրայ:

Երկու կուսակցութիւններու ներկայացուցիչները ընդգծեցին միջկուսակցական հանդիպումներու գումարման անհրաժեշտութիւնը, քննարկելու համար ընդհանրապէս հայութիւնը եւ յատկապէս լիբանանահայ գաղութին վերաբերող հիմնական խնդիրները:

ԱԶՐՊԷՅՏԱՆՑԻՔ ՄՕՏԷՆ ԿԸ ՀԵՏԵԻՒՆ ԷՃԵԻԹԻ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ

Ազրպէյճանական մամուլը մօտէն կը հետեւի թուրքերու վարչապետ Պիլչինթի Էճեւիթի Ուաշինկթոն այցելութեան: Թուրքերու վարչապետը Միացեալ Նահանգներ կը գտնուի բանակցութիւններ վարելու համար թուրքեւամերիկեան յարաբերութիւններուն շուրջ, յատկապէս տնտեսական եւ ռազմական բնագաւառէն ներս: Էճեւիթի կ'ընկերակցին աւելի քան 100 գործարարներ եւ 40 լրագրողներ:

Թրքական եւ ազրպէյճանական լրատուամի-

ջոցներ վերջին օրերուն յայտարարած էին, թէ Էճեւիթ իր բանակցութիւններուն ընթացքին պիտի քննարկէ նաեւ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման հարցը: Ազրպէյճանական «Շարք» լրատու գործակալութիւնը 14 Յունուարին յայտնեց, թէ թուրքերու վարչապետը ամերիկացի պաշտօնատարներու հետ իր հանդիպումներուն ընթացքին պիտի երկրորդէ թուրքերու բանակի սպայակոյտի պետ զօր. Հիւսէյն Քիլիբօզլուի վերջին յայտարարութիւնները: Զօր. Քիլիբօզլու յայտարարած էր, թէ Հայաստան ունի հաւաքական քանդուածի զէնքեր, եւ թէ Հայաստանի զէնքային հաստատուելին պատժամիջոցներ, իրաքի դէմ Ուաշինկթոնի հաստատած պատժամիջոցներուն նման: «Շարք» նաեւ տեղեկացուց, որ Էճեւիթ պիտի քննարկէ Ազրպէյճանի մէջ ՕԹԱՆի զինուորական խարսխի մը հաստատման ծրագիրը, եւ անոր իրագործման մէջ թրքական կողմին մասնակցութիւնը:

Հ. Յ. Գ. 111 ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Կը բանախօսեն՝ ՅՈՎԻԿ ՄԵԻԹԱՐԵԱՆ

Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի Գերկայացուցիչ

ՎԻԳԷՆ Ա. ՅՈՎԱՔԵՓԵԱՆ

Հ. Յ. Գ. Բիւրոյի անդամ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 18 Յունուար 2002, երեկոյեան ժամը 8:00ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» սրահին մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷԶ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԱԾ Է 107 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

2001 թվականին ընթացքին Հայաստանի արդարադատության նախարարության կողմից արտոնագրուած կուսակցութիւններուն թիւը աճած է 12ով: Ըստ Հայաստանի արդարադատության նախարարության, ներկայիս արձանագրուած կուսակցութիւններուն թիւը 107 է, սակայն այդ կուսակցութիւններէն 35ին հիմնադիր փաստաթուղթերը չեն համապատասխաներ «Հայաստանի քաղաքացիական օրէնսդիրք»ի պահանջներուն, եւ, ըստ էութեան, անվաւեր են:

Միայն մէկ կուսակցութիւն՝ Հայաստանի Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը (ինքնակոչ - «Ա»), գիմած է լուծարման համար: Նշենք, որ 2000 թվականին ընթացքին արձանագրուած է, ընդամէնը 7 կուսակցութիւն:

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԱՆՅԱԳԻՐՈՎ ԵՐԿՈՒ ԱՑՂԱՆՆԵՐ ԿԸ ԽԱԽՏԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԸ

Օրեր առաջ Հայաստանի մէջ Ռուսիոյ սահմանապահ զօրքերու խմբաւորման աշխատակիցները «Ջուարբնոց» օդակայանին մէջ Պոլիս-Երեւան թռիչքի ժամանակ ընթացքին ձեռնարկուած են ազգութեամբ աֆղան երկու քաղաքացի:

Ըստ սահմանապահ զօրքերու մամլոյ ծառայութեան ղեկավար Վ. Ժիրենքոյի, սահմանապահները ունեցած են պուլկարական անցադիրներ՝ պուլկարական ազգանուններով: Սահմանապահներուն մօտ կասկած յարուցած է այն հանգամանքը, որ ըստ անցադիր, սլաւոնական ծագումով երկու ուղեւորները ունեցած են ընդգծուած ասիական արտաքինը: Սահմանապահները ձեռնարկուած անձերը յանձնած են Հայաստանի ազգային անվտանգութեան նախարարութեան, որ տուեալ երեւոյթին առնչութեամբ քննուելուն ըսցած է:

Վ. Ժիրենքոյի համաձայն, ընդհանուր առմամբ անցեալ տարի արձանագրուած է սահմանի խախտման 81 պարագայ: Անոնց զգալի մասը օդային ճամբով եղած խախտումներն են:

ՄԵՍՐՈՊ ՊԱՏՐԻԱՐԿ ԱՅՅԵԼԱԾ Է ԹՈՒՐԳԻՈՅ ՎԱՐԶԱՊԵՏ ՊԻԻԼԷՆԹ ԷԾԵԻԹԻՆ

«Թրքիչ Տէյի Նիւզ» օրաթերթը կը յայտնէ, թէ Կոստանդնուպոլսոյ հայոց պատրիարք Մեսրոպ արք.Մութաֆեան 12 Յունուարին տեսակցութիւն ունեցած է Թուրքիոյ վարչապետ Պիլիքէի Էնեքիսի հետ:

Հանդիպումը տեղի ունեցած է վարչապետարանին մէջ: Պ. Էնեքիսի պատրիարքին փոխանցած է Նոր Ծարւան շնորհաւորութիւններ: Հանդիպման ներկայ գտնուած է նաեւ վարչապետութեան ընդհանուր տնօրէն Ահմէտ Սադր: Օրաթերթը չէ յստակացուցած, թէ պատրիարքը ի՞նչ նպատակով այցելած է վարչապետին:

Վ. ՓՈՒԹԻՆ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԶԱՊԵՏՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԱՅՂ ՊԱՇՏՈՆԱՏԱՐՆԵՐ

ԱՊՀի անդամ պետութիւններու ղեկավարներու խորհուրդի մէկ որոշման համաձայն, խորհուրդի նախագահ Վլադիմիր Փուկին, ԱՊՀի զարգացման եւ ամրապնդման ուղղուած աշխուժ գործունէութեան համար, պատուոգիւրներով պարգեւատրած է Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանը, Հայաստանի կառավարութեան աշխատակազմի ղեկավար նախարար եւ ԱՊՀի տնտեսական խորհուրդի անդամ Մանուկ Թոփուզեանը, Հայաստանի կառավարութեան աշխատակազմի արտաքին կապերու վարչութեան պետ Վասիլի Ղազարեանը (ներկայիս՝ Չինաստանի մէջ Հայաստանի դեսպան), նոյն վարչութեան պետի տեղակալ Ալեքսանտր Ալեքսիսեանը (այժմ՝ այդ վարչութեան պետ), ԱՊՀի կանոնադրական եւ այլ մարմիններու մէջ Հայաստանի մնալուն լիազօր ներկայացուցիչ Սուրէն Յարութիւնեանը, յատուկ յանձնարարութիւններով գեւապան, Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան ԱՊՀի վարչութեան պետ Լեւոն խաչատրեանը: ԱՊՀի տնտեսական խորհուրդին կից տնտեսական հարցերով յանձնարումներին մէջ Հայաստանի մնալուն լիազօր ներկայացուցիչ Արտակ Վարդանեանը եւ Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մէջ ԱՊՀի կառուցներու բաժանմունքի վարիչ Սերգէյ Սմբատեանը:

ՆՈՐ ՏԱՐԻՍԿՆԻ ՀԱՄԱՐ ԿՏՐՈՒԱԾ 15 ՀԱԶԱՐ ՏՕՆԱԾԱՌԵՐԸ ԱՄԲՈՂՁՈՒԹԵԱՄԵ ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻՆ

Անցեալ տարուան Դեկտեմբերի վերջաւորութեան Հայաստանի բնապահպանութեան նախարարութիւնը նստաշինք ենթակա սոճիի անտառներէն տօնածառի համար նախատեսած էր սպառել 15 հազար սոճի, որոնց հատումները նախարարին հրամանով 25 Դեկտեմբերէն ղադրեցուած են, որովհետեւ շուկային մէջ նկատելի էր տօնածառի կարգեցում, որ առնչուած էր Լեւոնային Ղարապինի Հանրապետութեանը, Վրաստանէն եւ այլ երկրներէ մեծ քանակութեամբ եղեւիներու ներածման հետ:

31 Դեկտեմբերին Երե-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՈՒԱՌԻ ԿՈՉՈՒՄՆԵՐՈՒ ԵՒ ԿՐԾՔԱՆՇԱՆՆԵՐՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ ՄՐՅՈՒՄ

Գիտութեան, կրթութեան, լրագրութեան, մշակութի, արուեստի, առողջապահութեան եւ մարմնակրթութեան մարզերուն մէջ պատուաւոր կոչումներու արժանացած անձերու պատուոգիւրներու, կրծքանշաններու, ինչպէս նաեւ պատուաւոր կոչումները հաւատարմ կաշառակներու մշակման հետ առնչուած աշխատանքներու կազմակերպման նպատակով Հայաստանի կառավարութեան 2001 թվականի 24 Դեկտեմբերի որոշումով ստեղծուած է մրցութեային յանձնախումբը:

Վերոյիշեալ յանձնախումբը պիտի կազմակերպէ Հայաստանի գիտութեան վաստակաւոր գործիչ, վաստակաւոր մտնկավարժ, վաստակաւոր լրագրող, մշակութի վաստակաւոր գործիչ, արուեստի վաստակաւոր գործիչ, վաստակաւոր արուեստագէտ, ժողովրդապիտ նկարիչ, վաստակաւոր ճարտարագետ, վաստակաւոր իրանարան, վաստակաւոր ըփիչի եւ մարմնակրթութեան վաստակաւոր գործիչ պատուաւոր կոչումներու, պատուոգիւրներու, կրծքանշաններու, ինչպէս նաեւ կոչումները հաւատարմ կաշառակներուն ձեւերու ստեղծման հրապարակային բաց մրցում:

Մրցումին կրնան մասնակցել Հայաստանի քաղաքացիներ, ինչպէս նաեւ՝ օտար քաղաքացիութիւն ունեցող անձեր:

Պատուաւոր կոչումներու կրծքանշաններու վրայ պարտադրաբար պէտք է պատկերուած ըլլայ Հայաստանի դրանշանը եւ դրօշակը, կոչումին անուանումը, ինչպէս նաեւ կարելի է օգտագործել տուեալ մարզը՝ առաւելագոյնս բնութագրող խորհրդանիշը:

Իւրաքանչիւր կրծքանշանի եւ վկայականի համար սահմանուած է մէկ մրցանակ՝ 100 հազար դրամի չափով, իսկ իւրաքանչիւր պատուոգիւրի համար նոյնպէս մէկ մրցանակ՝ 50 հազար դրամի չափով:

ՅՐԱՆՍԱՀԱՅ ՏՆՏԵՍԱԳԷՏ ՄԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԱԾ՝ ՅՐԱՆՍԱՅԻ «ԱՍՊԵՏ»Ի ԾՔԱՆՇԱՆՈՎ

Յրանսայի նախագահ ժաք Շիրաք հրամանագրով մը Ֆրանսական պետութեան «Ապետ»ի պատուով շքանշան պարգեւած է փարիզահայ տնտեսագէտ Միշէլ Բագումեանին: Ան շքանշան ստացած է տնտեսութեան զարգացման մէջ իր ունեցած մեծ ծառայութիւններուն համար:

Միշէլ Բագումեան Երեւանի տնտեսական շրջանակներուն մէջ ծանօթ անձնաւորութիւն մըն է: ան մօտ տարւոյ տարի առաջ Հայաստան այցելելով լծուած է նորակառու հայրենիքի տնտեսութեան օգտակար դառնալու աշխատանքին:

Յրանսահայ ԺիԻԱ (միջմասնադիտական խմբաւորում) կազմակերպութեան նախաձեռնութեամբ, Մ. Բագումեան դասախօսութիւններ տուած է Երեւանի առեւտրա-արդիւնաբերական տան մէջ կազմակերպուած տնտեսագիտութեան դպրոցին մէջ: Ան իր ընկերները եւ քաջաբերած է Հայաստանին օժանդակելու եւ նոյն աշխատանքներ տանելու:

Միշէլ Բագումեան գործօն մասնակցութիւն բերած է Լեւոնային Ղարապինի համար Յրանսայի մէջ տարուող աշխատանքներուն եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կազմակերպութեամբ Յրանսայի մէջ կայացած դրամահաւաքին, որմէ գոյացած գումարը տրամադրուած է Արցախի ճամբարներու նորոգութեան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ ԼՈՒՐՁ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ ՈՒՆԻՆ ԿՐԾՔԱՆՇԱՆ

Վերջերս, Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարար Լեւոն Մկրտչեան ըսած է, թէ համալսարանական գրադարանները աշխարհին մէջ վաղուց վերածուած են տեղեկատուական Հայաստան հետն է նաև կեդրոններ ունեցող, եւ ուսանողը, փաստօրէն, կրնայ միայն գիրքերէ օգտուիլ: Հայաստանի մէջ գտնուող քանի մը համալսարաններու, որոնց կարգին նաեւ Երեւանի Պետական համալսարանի գրադարանները ունին հարուստ գրականութիւն եւ ժամանակակից սարքաւորումներ: Ան լուծուած է ժամանակակից մրցումները: Սե-

փական համալսարաններու անդրադառնալով՝ նախարարը նշած է, թէ անոնցմէ միայն մէկ երկուքը ունին իրենց գրադարանները, համապատասխան այսօրոյններով, իսկ մնացեալները վարձքով կ'օգտագործեն քաղաքի այլ գրադարանները:

Ըստ Լ. Մկրտչեանի, ընդհանրապէս Հայաստանի մարզը գրադարանային համակարգը անկման մէջ է, նոյնիսկ Ազգային գրադարանը չունի բաւարար համալրում եւ ժամանակակից սարքաւորումներ: Ան ըսած է, որ այս հարցը կը լուծուի, եթէ երկրին մէջ համացանցին հարցը լուծուի եւ անկա մատչելի դառնայ ուսանողներուն:

Լ. Մկրտչեանի համաձայն, 1998 թվականին այս հարցին լուծման համար յատկացուած է յատուկ գումար, որուն միջոցով Երեւանի բոլոր համալսարաններուն համար պիտի ստեղծուէր միասնական համակարգային ցանց, իսկ կեդրոնը պիտի ըլլար Երեւանի Պետական համալսարանը: Սակայն այդ ծրագիրը մինչեւ օրս չէ իրագործուած, եւ ինք ձեռնարկուած է այդ աշխատանքը վերականգնուի:

Լ. Մկրտչեան հաւատարմաբար նշեց, որ հարցարաններուն մէջ լուծվող ներդրումներու կարիք կայ: Անդրադառնալով Հայաստանի գիտութիւններու ազգային ակադեմիայի գլխաւոր գրադարանի անմիջական վիճակին՝ Լ. Մկրտչեան ըսած է, թէ անիկա եւ համալսարաններու գրադարաններու մեծամասնութիւնը արդիականացման խնդիրն ուիմաց կանգնած են:

ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայերը հայկական բարձրագոյն վրայ եկուոր Գիտություն, Խորհրդային ժողովրդական պատմաբան, ինչպէս նաեւ «Լիտի կեդրարք» համարող, Հայկական Ցեղասպանութեան կանխմամբ ըլլալու բնոյթը հարցալուծակ լուծակ առնող, ինչպէս նաեւ Արցախի հայապատկան հող ըլլալուն մասին կասկածներ յարուցող կարգ մը հայագետներու հետ խորհուրդները խստօրէն բնագետները հայրենի երիտասարդ պատմաբան Արմէն Այվազեան, իր «Հայաստանի պատմութեան լուսաբանումը մեթոդիկապէս պատմագիտութեան մէջ. քննական տեսություն» (1998) խորագրեալ աշխատութեամբ, շեշտելով, որ յարցալուծակ պատմաբանի «անաչառութեան» տարագրով ներկայացող հայագետներ խորքին մէջ «անսեղակութեան», «անգրագիտութեան» եւ «սիրողականութեան» կը տառապին:

Ալեվի.Գ. ան կը հաստատէ, որ «Հայոց պատմութիւնը Հայաստանի անձեռնմխելի պաշարն է», եւ թէ շնորհիւ իրենց անսպառ ըլլալուն՝ «ազգային քաղաքակրթութիւնն ու ինքնութիւնը իսկակապ անկէն կ'արժեն, քան՝ քարիւղը, կազը, ոսկին...»:

Այվազեան սքափումի կոչ ուղղեց, որպէսզի Հայաստանի հզօրացումը չցանկացող «յայտնի եւ անյայտ ուժերու» որոգայթէն դուրս բերուի հայագիտութիւնը, որ այսօր կը խեղաթիւրուի Միացեալ Նահանգներու մէջ եւ այլուր, շարք մը հայ թէ օտար պատմաբաններու կողմէ:

Այվազեան դիտել տուաւ, որ թուրքագրպէյնցական հայատեղեկատուութեանն ու կեդրարքութեանն աւելի վտանգաւոր հետեւանքներ ունին այլ ուժերու պատուրը կատարող «կեղծ հայագետները» եւ, հետեւաբար, հարկ է աշխատանք տանիլ, որպէսզի Հայաստանը վերածուի հայագիտութեան գլխաւոր կեդրոնի, հետո՛ւ՝ օտար ազդեցութիւններէ:

Այվազեան, ինչպէս նաեւ այլ պատմաբանի մը Արմէն Պետրոսեանի ուսումնասիրութիւնները երբեմն բեւեռացած մ'օտեցումներով դիմաւորուեցան ակադեմական շրջանակներու եւ մամուլին կողմէ: Բայց քննադատութեան առարկայ պատմաբանները՝ Ռուսալտ Սիւնի, Ռուբէրթ Թոմարեան, Սիմա Կարսյան, Ճէյմս Ռիպը, Ռուբէրթ Հիւսքեան եւ Նիքիթին լուծուած մտացին հարցին շուրջ: Միայն Բոնկերիսի գրադարանի Կովկասի բաժնի պատասխանատու Լեւոն Աւոյանց հակադրեց գրախօսակցով մը («Հայագետն Հայագիտական Հանդէս», 2000): Հայաստանի եւ, Սփիւղի բանի մը պատմաբանների գրախօսակցներով կամ յայտարարութեամբ քննադատեցին Այվազեանը, ընդունելով հանդերձ անոր կարգ մը Գիտությունները: Միւս կողմէ, Հայաստանի ակադեմիական շրջանակին մէջ ընդհանրապէս բարձր գնահատանքի արժանացաւ Այվազեանի աշխատութիւնը, իսկ սփիւղեպան եւ յատկապէս հայաստանեան մամուլը յարգողաբար մտաւարեւմուտքի մէջ հայագիտութեան խեղաթիւրումի երեւոյթին:

Երեւանի Պետական համալսարանի հայոց պատմութեան ամպիոնը 19 Դեկտեմբեր 2001ի իր Գիտություն բնական յայտարարութեամբ ելաւ պաշտօնակցական խոսքով Ա. Այվազեանի եւ Ա. Պետրոսեանի տեսակետները:

Ամպիոնը, «ծառօնակցով վերջին տարիներին արտասահմանեան հայագիտական հրապարակումներին», համոզում յայտնեց, թէ «ճերկայումս միջազգային հայ պատմագիտութեան բնագաւառում ստեղծուած է բաւականին վտանգաւոր կացութիւն», որուն, ըստ յայտարարութեան, պատճառներն են ամերիկեան հայագիտութեան կարգ մը ներկայացուցիչներուն կողմէ բաց է թողնուած հայագիտութեան հարցումները եւ ներքինի իրենց վերլուծութիւններով քրքրակն են ազգայնացնական ակադեմիականութիւնը կատարուող հայագիտութեան արդիւնքի վերականգնումը:

Անբոյլ տարիներ եւ վաստաբեր Գիտություն «կեղծ հայագետներուն» ծաւալած գործուցութեան Գիտություն հայ գիտական հասարակութեան չէզոքութիւնն ու անտարբերութիւնը ամպիոնը որոշեց դիմել Սփիւղի հայագիտական կեդրոնները ֆինանսաւորողներուն, որպէսզի աշխուրջ հետեւին, թէ իրենց տուած օգնութիւնը հայաստան, թէ հայաստան անպատկան հայագետներուն կը ծառայէ: Ամպիոնը նաեւ առաջարկեց Հայաստանի կառավարութեան՝ հարգապան Գիտություն հայագիտութեան, ինչպէս նաեւ՝ «հայագիտութեան անխորհրդարգաբացման համար ստեղծել հայագիտական հետազոտութիւններու համաշխարհային ակադեմիա, որուն կեդրոնը ըլլայ Երեւանի մէջ եւ գերծ օտար քաղաքական ազդեցութիւններէ»:

Խ. Մ.

«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքեն «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման բուֆետին անուագ օրը առաջ, Մինչեւ Երեւանի ԺԱՄԸ 5:00:

ՄԱՀԱՋՂԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահազդ կ'ընդունուի միջառն ուղ թաղեր, այնքան ատեն որ զանց հրատարակելու հնարաւորութիւն կայ:

Հ. Յ. Դ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ-ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

11-ին 12 Յունուար 2002-ին Մաղկաձորի մէջ տեղի ունեցաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Երիտասարդական-ուսանողական միութիւններու կեդրոնական վարչութիւններու ներկայացուցիչներու խորհրդաժողով՝ մասնակցութեամբ աւելի քան 15 երկիրներու Հ. Յ. Դ. երիտասարդական միութիւններու եւ 4 շրջաններու ուսանողական միութիւններու ներկայացուցիչներու:

Խորհրդաժողովը քննարկեց դաշնակցական երիտասարդութիւնը յուզող հարցեր, ինչպէս նաեւ՝ ներքին կազմակերպական, քաղաքական եւ միջազգային յարաբերութիւններու առնչուող խնդիրներ: Կարեւորութեամբ ընդգծուեցան Հայ երիտասարդութեան ներկայ ապագա դարձանքի վիճակը, անոր տուն տուող պատճառները եւ երիտասարդութեան քաղաքականացման ուղղութեամբ տարուելիք աշխատանքներու անհրաժեշտութիւնը:

Քննարկման առարկայ դարձան Հայրենի եւ սփիւռքեան երիտասարդութեան դիմագրաւած դժուարութիւններն ու մարտահրաւէրները: Շեշտուեցաւ երիտասարդական մակարդակի հայրենիք Սփիւռք յարաբերութիւններու զարգացման կարեւորութիւնը՝ յատկապէս Հայրենի երիտասարդութեան դիմագրաւած դժուարութիւններուն ծանօթանալու եւ անոնց լուծման նպատակով նպատակով: Յատուկ ուշադրութեան առարկայ դարձան Հայկական պետականութեան հզօրացման հղովնութիւն մէջ երիտասարդութեան դերն ու պարտականութիւնը:

Հայկական Յեղափոխութեան ճանաչման եւ Հայ Դատի աշխատանքներու ծիրին մէջ շեշտուեցաւ միջազգային երիտասարդական կազմակերպութիւններու հետ յարաբերութիւնները կարունակելու եւ գանոնք աւելի եւս ընդարձակելու անհրաժեշտութիւնը: Խորհրդաժողովի աւարտին ետք, 13 Յունուարին Հ. Յ. Դ. երիտասարդական-ուսանողական միութիւններու ներկայացուցիչները մասնակցեցան Հ. Յ. Դ. Հայաստանի Երիտասարդական Միութեան կազմակերպած ընկերային ձեռնարկին:

«ԱՐՄԻՆԻԸՆ ՌԻՎԻՍՏ»-Ն ՎԵՐՍՈՒՄԱՒ ԵՐԱՏԱՐԱԿՈՒԻԼ ԱՌԱՋԻՆ ՄԻԱՅԵԱԼ ԹԻԻԸ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՍԱՍՈՒՆԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒՆ

Վերջերս վերսկսած է «Արմինիլը Ռիվիստ» պարբերականի հրատարակութիւնը, իր առաջին միացեալ Գարուն-Ամառ 2001-ի թիւը նուիրելով Սասունի կոտորածներուն:

«Մենք յաղթահարեցինք հրատարակչական մեր դժուարութիւնները, Ուոթըրթաունի մեր գրասենեակը վերադասարկեցինք եւ մեր «կայքը» պատրաստ է: Մեր ընթերցողներուն պիտի միանանք երկար ժամանակով, կ'ըսէ պարբերաթերթի խմբագիր Հայկ Օշական:

Այս թիւին հիւր-խմբագիրն է Շիքակոյի Համալսարանէն՝ Ռոնալտ Սիւնի: Կը սկսի Սիւնիի կողմէ կատարուած ներածականով, կը շարունակուի յօդուածներով, ստորագրուած Վահագն Տատրեանի, Մորիզի Ռուսոյի, Ռէմոն Գէորգեանի, Ճորճ Շիրինեանի եւ Ռեպեթա Մորիսի կողմէ: Այդ թիւը կը փակուի Մարկ Նշանեանի կողմէ Վահէ Օշականի յիշատակին նուիրուած գրութեամբ:

«Արմինիլը Ռիվիստ»-ի խմբագրական կազմի անդամներն են՝ Ռիչըրտ Յովհաննէսեան, Լեւոն Շորպաճեան, Փիլիպ Քաուի, Վահագն Տատրեան, Կ. Կոչկարեան, Արա Ռանճեան, Տիգրան Գուլումճեան, Մարկ Նշանեան, Սուզըն Փէթի, Ռոնալտ Սիւնի, Խաչիկ Թէօյօյեան:

«Արմինիլը Ռիվիստ»-ի բաժանորդագրութեան գինն է 30 տոլար անհատներու համար, 60 տոլար Միացեալ Նահանգներու հաստատութիւններուն համար:

Բաժանորդագրուելու համար դիմել հետեւեալ հասցէին՝

Armenian Review, Inc.
80 Bigelow Avenue
Watertown, MA 02472-2012
USA
Հեռաձայն՝ (617) 926-4037
Կայք՝ www.armenianreview.org.

Հ. Յ. Դ. 111ԱՍԵԱԿ ՄԻՇՏ ԱՐԹՈՒՆ ՊԱՀԱԿԸ

Ինչպէս որ եւ ընտանիքի պարագային, ուր անդամներէն մէկը (ընդհանրապէս հայրը) տիրութիւն պետք է ընէ եւ իր ուսերուն վերցնէ ընտանիքին հոգեբեր, նոյն ձեւով, որ եւ հաւաքականութեան եւ ժողովուրդի պարագային, ժողովուրդի ընդհանրական շահերը պաշտպանելու պարտականութիւնը իր ուսերուն կը վերցնէ հատուած մը: Հայ ժողովուրդի պարագային, եթէ անցեալին այդ պարտականութիւնը կը տանէին նախարարական տուներն ու եկեղեցիներ, այս վերջին հարիւր տարիներուն հայկական կուսակցութիւններն ալ իրենց բաժինը վերցուցին:

Հայ ժողովուրդի հաւաքական շահերը պաշտպանելու եւ բոլոր դժուարութիւններուն դիմաց պայքարելու անընդուն կամքով հանդէս եկաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ 111 տարիէ ի վեր տիրութիւն կը կատարէ Համայն Հայորդիներուն եւ միշտ պատրաստ է ամենաթանկը զոհաբերելու յանուն Հայ ժողովուրդի երազներու իրականացման: Փաստօրէն ան մշտաբար մտնում է մեր ժողովուրդին:

Օսմանեան պետութիւնը հայը ընկատեց ստրուկ, եւ «բաժնէ որ տիրես»-ի քաղաքականութեամբ խորհեցաւ լաւագոյնս օգտագործել աշխատասէր այս ժողովուրդը:

Հ. Յ. Դաշնակցութիւնը միաւորեց հայ յեղափոխականները, հաւաքական ուժ ստեղծեց եւ հայտն ստրուկի հոգեբանութեան վերջ տալով՝ արժանապատիւ կերպով ապրելու դրօշը պարզեց: Օսմանեան պետութիւնը ջարդեր կազմակերպեց Սասունի մէջ: Դաշնակցական ֆետայիներ «մահ կամ ազատութիւն» նշանաբանով ոտքի կանգնեցան եւ արժանի հակահարձակում տուին թշնամիին:

Ցարական Ռուսիան բռնագրաւեց

եկեղեցական կալուածները եւ բանտարկեց դաշնակցականները: Հ. Յ. Դաշնակցութիւնը պայքարեցաւ եւ ծախողեցուց այս ծրագիրը:

Թրքական պետութիւնը՝ գործադրելով 20րդ դարու առաջին ցեղասպանութիւնը, փորձեց հայերու ջնջումով լուծել հայկական հարցը: Հ. Յ. Դաշնակցութիւնը կամաւորական գունդեր ստեղծեց հերոսական դիմադրութեամբ ստեղծեց անկախ Հայաստան:

Հ. Յ. Դաշնակցութիւնը յաջողեցաւ Հայկական Յեղափոխութեամբ տարազիր դարձած հայ բեկորները քաղաքականացնել, կազմակերպել, վերածել ամուր գաղութներու եւ դեկաւարել ցեղասպանութեան նախնի համահայկական ճիգը:

Ազգերի օմնականները Սովետային ժողովրդականացումը Ստեփանակերտի խաղաղ ցոյցերուն: Հ. Յ. Դաշնակցութիւնը օգնութեան իր ձեռքը երկարեց Արցախի պայքարող ժողովուրդին եւ Մուշիկ դարձեալ ստացաւ իր հայկական դիմագիրը:

Հայաստանի ՀՀՇԿԿԿ իշխանութիւնները արգիլուած յայտարարեցին Հ. Յ. Դաշնակցութիւնը: Դաշնակցութիւնը շարունակեց գործել անխափան՝ իր ծառայութիւնները մատուցելով հայրենի ժողովուրդին:

Այս բոլորէն ետք, արդարօրէն կրնանք ըսել, որ «Այո, Հ. Յ. Դաշնակցութիւնը տիրութիւն ըրած է եւ պիտի շարունակէ ընել, հայ ժողովուրդին, պիտի մնայ անոր միշտ արթուն հսկող պահակը»:

Այսօր, հայրենիքի հզօրացման հանգրուանն է. Հ. Յ. Դաշնակցութիւնը իր բոլոր կարելիութիւններով լծուած է այս աշխատանքին միշտ պատրաստ վիճակի մէջ:

Ե. ՀԱՄԵԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱԿԸ ՊԻՏԻ ԶՄԱՍՆԱԿՅԻ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՕԹԱՆԻ ՌԱԶՄԱՓՈՐՁԵՐՈՒՆ

Հայաստանի բանակի գլխաւոր հրամանատար Միքայէլ Յարութիւնեանի համաձայն, Վրաստանի մէջ կայանալիք ՕԹԱՆ-ի ուժաւորութիւնները պիտի չմտնեն Վրաստանի տարածքը, սակայն չենք ծրագրած մեր զօրամիւտներուն հակառակ կողմէ:

Հայաստանի մէջ տեղի ունեցող ՕԹԱՆ-ի խաղաղապահ ուժերու ռազմափորձերը, որոնց պիտի մասնակցին քանի մը տասնամեակի ընթացքին հիւրընկալուելու համար Հայաստանի մէջ տեղի ունեցող ՕԹԱՆ-ի խաղաղապահ ուժերը, որոնց պիտի մասնակցին քանի մը տասնամեակի ընթացքին հիւրընկալուելու համար Հայաստանի մէջ տեղի ունեցող ՕԹԱՆ-ի խաղաղապահ ուժերը:

«ԱՉԴԱԿ»-Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱՉԴԱԿ»-Ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

Spend more or apply for any card and win \$5000 each in prizes (Unlimited Winners) card promotion

Visit any Credit Libanais branch to play the game that could give unlimited winners \$5000 each in prizes! All you have to do is increase the monthly spending on your Credit Libanais card, or sign up for a new one.

For further information, call our Customer Service Center on 01-900 111 e-mail us at info@creditlibanais.com or visit any of our 53 branches throughout Lebanon.

www.creditlibanais.com

الاتحاد اللبناني CREDIT LIBANAIS

CLOSE TO YOU

ԻԶԱՊԵԼ ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆ ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ ՕՓԵՐԱՅԻՆ ՄԷՋ

Դուրսը՝ անձրեւ, ցուրտ, փոթորիկ, եկեղեցույ մէջ՝ խաղաղ, տաքուկ «Սուրբ-Սուրբ» շարականի մեղծ երգեցողութեան ընդմէջէն զգացի, որ Աստուծոյ հետ խօսելու լեզուն հայ եկեղեցական շարականներն են:

Եկեղեցույ խաղաղ լուրեան մէջ պատարագիչ հայր սուրբը կը հաղորդէ, թէ բարեպաշտ մը «Տեր Ողորմեա» կը խնդրէ հիւանդի մը առողջութեան եւ աշխարհի խաղաղութեան համար. վերջապէս կը լսուի Աստուծոյ հետ հաղորդակցելու ընթացքը եւ մեղծ «Տեր Ողորմեա»:

Շուրջս կը մայիմ, շատեր իրենց արցունքները կը սրբեն, ինչո՞ւ մեղքս պահեմ, ե՛ս ալ: Լռութեան մէջ շատեր խոկունի մէջ են, այդ ընթացքին մէջ:

Պատարագը կը շարունակուի: Շատերուն աչքերը ուղղուած են դէպի վերնաստի, հասկանալու համար, թէ ո՞վ է այս նորեկ ձայնի տերը:

Շաղորդութեան ժամն է, փափսուք մը կը սկսի ժողովուրդին մէջ. երիտասարդ հայուհի մը դպրաց դասի շապիկով կը մտնեայ խորանին եւ հաղորդութիւն կը ստանայ: Ամենուն աչքերը իրեն յառած են. ինք համեստ քայլերով կը միանայ խորանին:

Այսօր մեզի Աստուծոյ հետ հաղորդակցելու կապը եղաւ միջազգային մրցանակներու տիրացած, օփերայներու մէջ փնտռուած մեծակատար, հայ եկեղեցույ դպրաց դասի ծառայող երգչուհին՝ Իզապէլ Պայրագտարեան, որ իր բազմազառ ժամանակացոյցէն պահ մը յատկացուցած է հայ եկեղեցույ պատարագի երգեցողութեան մասնակցելու:

Երգչուհի Իզապէլ Պայրագտարեան այսօր ձանցուած անուն մըն է միջազգային բեմերու վրայ եւ հայ իրականութեան մէջ:

Սան Ֆրանսիսքոյի միջազգային օփերայի հրաւերով ան դեր ստանձնած է «Մերի Ուիտնոու» օփերային մէջ, որ պիտի բեմադրուի Յունուար 11, 13, 15, 17, 19 2002-ին:

Բախտը ունեցանք հանդիպելու Իզապէլին հետ, հայկական տաքուկ ընտանեկան յարկի մը տակ եւ հակիրճ զրոյց մը ունեցանք, որ կ'ունենայ հանրութեան սեփականութիւնը դարձնելու:

ԳԱՐՐԻԷԼ ՓԱՆՈՍԵԱՆ

ՀԱՐՑՈՒՄ.- Սիրելի՛ Իզապէլ, այսօր դուն ինձի համոզեցիր, որ Աստուծոյ հետ կապուելու լեզուն իրապէս մեր եկեղեցական շարականներն են. երախտապարտ եմ քեզի: Դուն, որ այդ զգացումը կը փոխանցես ունկնդրողին, ի՞նչ կը զգաս երբի պահուն:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ես չեմ երգեր եկեղեցույ մէջ, այլ կ'աղօթեմ Աստուծոյ. «Տէր Ողորմեա» չեմ երգեր, այլ ողորմութիւն կը խնդրեմ Աստուծոյ՝ իմ սխալներուս եւ աշխարհի խաղաղութեան համար:

Հ.- Կրնա՞ք մեզի տեղեկութիւն տալ Սան Ֆրանսիսքոյ մեր այցելութեան եւ ծրագրերներուն մասին:

Պ.- Սան Ֆրանսիսքոյի Օփերային Հրաւերով հինգ անգամ ելոյթ պիտի ունենամ «Մերի Ուիտնոու» օփերային մէջ, որմէ ետք, այս տարի ունիմ հինգ այլ պայմանագրութիւններ՝ տարբեր օփերաներու մէջ:

Հ.- Մի՞նչ եւ հիմա քանի՞ օփերայի մէջ դեր ստանձնած էք եւ քանի՞ միջազգային մրցանակներու արժանացած:

Պ.- Իրականութեան մէջ իմ անցեալի յաջողութիւններուս մասին չեմ կրնար խօսիլ: Միշտ կը մտածեմ, թէ՛ ի՞նչպէս կրնամ նոր յաջողութիւններ ունենալ: Միշտ իմ ապաւէնս եւ յոյսս իմ Աստուծոսն է:

Հ.- Ձեր հայկական ծագումը որ եւ ձեռնով արգելք կ'ըլլայ՝ միջազգային բեմերու վրայ յաջողութեանը:

Պ.- Ես այդ բարդ յոյսը չունիմ: Ընդհակառակն՝ միշտ ըսած եմ՝ «Ես հայ բանաստեղծ եմ եւ հպարտ եմ»: Ինքնապատահաբար եմ իմ արուեստովս, իրական արուեստագէտը իմ արուեստովս կրնայ պարտադրել իր կամքը:

Հ.- Հայաստան այցելա՞ծ ես:

Պ.- Ո՛չ, կ'ուզեմ երթալ հայրենիք եւ հոգիս խորքէն երգել, երգել եւ երգել:

Հ.- Երբ օտար օփերայի մէջ բեմ բարձրանաս, ամփոփուելու վերջին վայրկեաններ կ'ունենաս անշուշտ, անպայման որ կ'աղօթես, ի՞նչ լեզուով:

Պ.- Ես միշտ հայերէն կը մտածեմ եւ հայերէն կ'աղօթեմ, հայերէն մտածելու եւ հայերէն աղօթելու զգացումս ժառանգած եմ մօրմէս. մայրս շատ մեծ ազդեցութիւն ունեցած է նաեւ հայրենասիրական իմ զգացումներուս վրայ, որուն համար երախտապարտ եմ:

Հետաքրքրեալն րան մըն է ըսեմ: Ընդհանրապէս հայկական սովորութիւն է, որ ձեռնարկներէն ետք, չեն մօտենար արուեստագէտներուն շնորհաւորութեան համար: Խորհելով, որ անոնք յոգնած կ'ըլլան եւ չեն ախորժիր, ընդհակառակն՝ երբ ես օտար միջավայրի մէջ եմ եւ օտար երգեր կ'երգեմ, կը պատահի որ հայ մը զայ եւ հայերէն խօսի հետս, կը սթափիմ եւ կ'ունենամ այն խաղաղութիւնը, որ հայկական միջավայրի մէջ կը գտնուիմ:

Հ.- Հայկական ի՞նչ ձեռնարկներու կը մասնակցիս:

Պ.- Երբ առիթը ունենամ Թորոնթոյի եկեղեցույ մէջ կ'երգեմ: Մօտ ատենէն միջազգային շուկայ պիտի հանուի: 1700 ամեակի առիթով պատրաստուած նոր խտացեալ ձայնապնակ մը, հայ հոգեւոր եկեղեցական երգերու, Թորոնթոյի միջազգային նուագախումբին մասնակցութեամբ:

Կը փափաքեմ եւ կը փորձեմ միջազգային հանրութեան լսելի դարձնել հայ երգը:

«ԱՍՊԱՐԷՉ»

www.hamazkayin.com

ՈՒՍՏԻՆԿԹԵՆ ԿՈՉ ԿՈՒՂՂԵ ԹԵԼ ԱԵԻԻԻ՝ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՁԵՆՔ ԶՎԱՃԱՌԵԼ

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշի կառավարութիւնը կող ուղղած է իսրայէլի՝ զէնքերու արհեստագիտութիւնը չվաճառելու Հնդկաստանի, Փաքիստանի հետ լարուածութեան հանգրուանին, յայտնեց ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատար մը:

Պաշտօնատարը ըսաւ, որ Ուաշինկթըն իր պահանջը իսրայէլի ներկայացուցած է անցեալ շաբաթ: Ան ակնկալեց, որ իսրայէլ պիտի ընդառաջէ ամերիկեան պահանջին՝ կարգ մը հարցերու մասին լուսարանութիւններ ստանալէ ետք: Պաշտօնատարը ակնկալեց, որ Ուաշինկթըն իսրայէլի փոխանցած է, թէ առաջարկուած վաճառքը ղեկավարութիւններ կը ստեղծէ Միացեալ Նահանգներուն համար: Պաշտօնատարը շեշտեց, որ իսրայէլի յատկորէն ըսուած է, թէ հիմա Ժամանակը յարմար չէ վաճառքը կատարելու:

Իսրայէլ - Հնդկաստան դիւանագիտական կապերու հաստատումէն (1992) ի վեր, երկու երկիրները թափ տուած են պաշտպանութեան ու զինուորական մարզի գործակցութեան:

(ՌՈՅԹԸՐԶ)

Ա. Մ. ԷՍԻՐՈՒԹԻՆՆԵՐ - ՖՐԱՆՍԱ ՄԻԱՅԵԱԼ ՈԱՋՍԱՓՈՐԶ

Արարական Միացեալ Էմիրութիւններու եւ Ֆրանսայի օդուժի միաւորներ միացեալ ռազմափորձեր կատարեցին Մոցի վերեւ, հաղորդեց Ա. Մ. Էմիրութիւններու «ՌԱՄ» պաշտօնական լրատու գործակալութիւնը:

Չափեր 2002 ռազմափորձերը կը նպատակադրեն բարելաւել օդային պատերազմի կարողութիւնները եւ օդային պաշտպանութեան ուժերը, ինչպէս նաեւ քննել նոր ձեւերով պատերազմելու թեքմիքները, ակնկալեց գործակալութիւնը:

Արեւմտեան զինամթերք գնող Ա. Մ. Էմիրութիւններ, պաշտպանութեան մարզին մէջ համագործակցութեան մէջ է Ֆրանսայի, Միացեալ Նահանգներու եւ Բրիտանիոյ հետ: Ապու Տապի կանոնաւոր ընթացքով ռազմափորձեր կը կատարէ Արեւմուտքի երեք այս երկիրներուն հետ:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՇԵՅՆ ԺԱՊԵՐ ԱՀՄԵՏ ՍԱՊԱՀ ՎԵՐԱԴԱՐՁԱՒ ԸՈՒԷՅԹ

ՔՈՒԷՅԹ, 15 (ՌՈՅԹԸՐԶ).- Քուէյթի Էմիրը՝ շէյխ Փապէր Ահմէտ Սապահ Երեքշաբթի օր տուն վերադարձաւ, աւելի քան չորս ամիս բուժումի ենթարկուելէ ետք Բրիտանիոյ մէջ:

Պաշտօնատարներ յայտնեցին, որ 73 տարեկան իշխանապետը ամբողջութեամբ ապաքինած վերադարձած է, վերստանդնելու համար երկիրն դեկը: Շէյխ Սապահ Սապատեմբերի Լոնտոն փոխադրուած էր, կաթնուածի մը ենթարկուելէ ետք:

Հազարաւոր քուէյթցիներ օդակայանի ճամբուն երկու կողմերը կանգնած՝ դիմադրեցին Էմիրը, մինչ պատերազմական օդանավեր թռչելէն վերջ պատերազմական օդանավեր թռչելէն վերջ օդակայանէն դէպի պալատ տանող ճամբուն վրայ, քուէյթցիներ պարբերով ողջունեցին Էմիրը եւ ոչխարներ գնեցին անոր ապաքինման համար:

Կառավարութիւնը Յունուար 15 - 16 արձակուրդը յայտարարած էր՝ նշելու համար շէյխ Սապահի վերադարձը:

ՆԱԽԱԳԱՀ ԶՕՐ. ԷՄԻԼ ԼԱՀՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄԵՐԻԿԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն

Նախագահ Լահուտ նաեւ դրուատեց իր եւ Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի յարաբերութիւնն ու լիբանանեան եւ սուրիական կառավարութիւններուն միջեւ գործակցութիւնն ու համակարգումը:

Կէպտոս հանդիպումէն ետք ըսաւ, որ արժարձը լած են Լիբանանի մէջ տնտեսական հարցերը, ինչպէս նաեւ ահաբեկչութիւնը, զոր արմատախիչ ընելու համար կ'աշխատին Միացեալ Նահանգները եւ բոլոր պետութիւնները: Աստից կողքին նաեւ արժարձուեցան Միջին Արեւելքի տագնապը, խաղաղութեան բանակցութիւնները եւ անոնց յաջողութեան համար ի գործ դրուած ճիգերը:

Լիբանան շատ խոհեմ է եւ փորձառու՝ այս հարցերուն մէջ, եւ մենք մեր երկիրը պիտի վերադառնանք եւ պիտի փորձենք յաջողութեան տուեաները ապահովել Լիբանան - Միացեալ Նահանգներ յարաբերութիւններուն եւ Միջին Արեւելքի խաղաղութեան բանակցութիւնները վերականգնելու ճիգերուն համար, ըսաւ ան:

ՍՖԵՅՐԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Նախագահ Լահուտ երէկ նաեւ ընդունեց մարոնիներու մար Նասրալլա Պուժթոս Մֆէյր պատրիարքը, որուն հետ շրջանային եւ միջազգային զարգացումներու, ինչպէս նաեւ ներքին տնտեսական պայմաններու քննարկումը շարունակուեցաւ կէսօրուան ճաշի պահուն:

Անոնք հաստատեցին, որ այս հարցերը շրջանցելու եւ մարտահրաւէրները դիմագրաւելու համար անհրաժեշտ է մէկտեղել բոլոր լիբանանցիներուն ճիգերը, նկատի առած որ դէպքերը կը հաստատեն, թէ երկրի կայունութեան եւ յաջողութեան երաշխիքը ազգային միասնութիւնն է:

ՃԱՓՈՆ 500 ՄԻԼԻՈՆ ՏՈՒՍԱՐ ՊԻՏԻ ՏՐԱՍԱԴՐԵ ԱՖՐԱՆԻՍԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԸԱՄԱՐ

Ամերիկեան ռազմական օդանավերը երէկ սկսած են նոր թիրախներ հայածել, քանզայն ետք արեւելեան Աֆղանիստանի մէջ «Քալիտա» ի եւ թալիբան ուժերու ապաստաններ, մինչ ճափոն կը խոստանար յառաջիկայ 25ն 4 տարիներուն 500 միլիոն տոլար յատկացնել պատերազմին պատճառով քանզայն ըստ Աֆղանիստանի վերականգնման:

ՄԱԿ յայտնած է, թէ փոխանցման նոր կառավարութիւնը կրնայ ձախողութեան մատուցել, եթէ քանի մը օրուան ընթացքին 100 միլիոն տոլար օժանդակութիւն չյատկացուի վճարելու համար պետական պաշտօնեաներու եւ ոստիկաններու ամսականները:

«Քալիտա» ի եւ թալիբաններու յաւելեալ 30 ձերբակալեալ անդամներ մինչ այդ երկուշաբթի օր Քուէյթի ամերիկեան ծովուժի խորիսխը հասած են՝ բանտարկեալներու առաջին խմբակի մը միանալու համար:

Ամերիկեան ռազմափորձումներու արշաւին 100րդ օրը, ամերիկեան օդանավեր ծառայող Քիլի շրջանին մէջ շէյն-եբր քանդած են եւ տասներկուսորդ քարայրներու մուտքեր փակած՝ քանզայն համար, ըստ ամերիկեան բանակին, Փաքիստան խոշո տալ փորձող զինեալներու մէկ կողմը:

Ամերիկացի պաշտօնատարներ յայտնած են, թէ Ժառուարի շրջանին մէջ սաստիկ ռազմական ծումները վերջ գտնելու ընթացքի մէջ են եւ բանակը այլ թիրախներ կը փնտռէ եւ քայլերու կը դիմէ արգիւելու համար:

«Քալիտա» ի եւ թալիբան ուժերու, որպէսզի վերախմբուին: Ամերիկեան բանակին բարձրաստիճան մէկ սպան երէկ յայտնած է, թէ ամերիկեան ուժերը հարաւային Աֆղանիստանի Գանտահար քաղաքին օդակայանին մէջ իրենց կեդրոնին մօտ զէնքերու պահեստանոց մը գտած են:

Միւս կողմէ, Ֆիլիպինցի պաշտօնատարներ երէկ յայտնած են, թէ ամերիկեան մասնաշառուկ ուժերը երկրին հարաւային շրջանին մէջ Ֆիլիպինեան ուժերուն հետ միացեալ գործողութիւններու պատրաստելու սկսած են՝ Ուսամա Պըն Լատէնի հետ կապեր ունեցող իսլամ զինեալներու դէմ:

Պաշտպանութեան փոխ նախարար Փոլ Վոյ-Ֆոլից ըսած է, թէ պաշտպանութիւնը կ'արդէ հանգրուանին ուշադրութեանց կեդրոն պիտի դառնայ Ֆիլիպիններ:

(ՌՈՅԹԸՐԶ)

22 ՀԱԶԱՐ ԱՇՊԱՏԱՒՈՐՆԵՐ ՊԱՇՏՕՆԱԶՐԿՈՒԱԾ

ԱՆԳԱՐԱ, 15 (ՌՈՅԹԸՐԶ).- Թուրքիա 6 շաբթուան ընթացքին պաշտօնազրկած է պետական մարզի շուրջ 22 հազար աշխատուորներ, մինչ նա կը փորձէ գործադուր ծախսերու կրճատման նպատակով միջոցառումներ, որոնք բանալի են Դրամական Միջազգային Ֆոնդին 10 միլիար տոլար յաւելեալ վարկ ստանալու համար:

Թուրքիա ֆոնդին խոստացած է, թէ պիտի կրճատէ իր դիւանակալութիւնը, կրճատելու համար պետական ծախսերը:

Պետական նախարար Մեհմէթ Քիչեքլիքը ըսած է, թէ 50 տարեկանէ վեր ընդհանուր 26,500 հոգի դիմած է կանխահասօրէն հանգստեան կոչուելու համար:

Ան ըսած է նաեւ, որ պաշտօնազրկումներու ծրագիրը պիտի շարունակուի:

ՖԱԹԸ ԸԱՍՏԱՏ ՊԻՏԻ ՊԱՇԵ...

Շարունակուած Ա. Էջէն

Իրակ Անթընի Չիւնի, սակայն նախարարութիւնը չըսաւ, թէ Չիւնի ե՞րբ պիտի այցելէ Իսրայէլ ու պաղեստինեան շրջանները: Չիւնի Ուաշինկթըն վերադարձած էր 3ուրտար 6ին:

Իսրայէլի պաշտպանութեան նախարար Պինիամին Պըն Էլիսպար իուելով Ֆաթիի ծայրայեղական Ռաֆտ Քարմիի սպանութեան մասին, ըսաւ, որ անիկա «աշխատանքի արկած»ի արդիւնք էր: Իսրայէլ այդպէս կ'անուանէ սկանդալներու պատրաստութեան պահուն սպանութեան մասին, ըսաւ, որ անիկա «աշխատանքի արկած»ի արդիւնք էր: Իսրայէլ այդպէս կ'անուանէ սկանդալներու պատրաստութեան պահուն սպանութեան մասին: Իսրայէլեան բանակը, որ պաղեստինցիներուն կողմէ կ'ամբաստանուի Քարմիի սպանութեան յանցանքով, մերժեց մեկնաբանութիւն կատարել:

«Աքսայի Նահաւտակներու Չոկատ»ը, որուն ղեկավարներէն էր Քարմի, յայտարարեց, որ փնտրուող պիտի չգործադրէ: Շարժումին անունով հրապարակուած յայտարարութիւն մը կը նշէր, որ նահատակին արիւնքի վրէժափած պիտի չըլլայ եւ թէ Քարմիի սպանութեան պատասխանը կը պատրաստուի Իսրայէլի դէմ:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան քանքեր Ռիչըրտ Պաուլըր քննադատեց իսրայէլեան բանակին կողմէ պաղեստինցիներու սպանութիւնները:

Պաուլըր, ընդհանրապէս եւ ինտոնեգիայէն ահարեկիչներու արտաքուստը:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՒՇԵՐՈՒ ԿԱՐԻՔԸ ԶՎԱՅ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՄՈՅ ՍԷՋ

Մինչ այդ, ռուսական սահմանապահ ուժերու հրամանատարը յայտնած է, թէ նախկին խորհրդային կեդրոնական Ասիոյ մէջ հաստատուած ամերիկեան ուժերը անհրաժեշտ պիտի չըլլան, Աֆղանիստանի մէջ զինուորական արշաւին աւարտէն ետք:

Քոնսթանթին Թոցքի ըսած է, թէ կեդրոնական Ասիոյ խորհրդայիններու մէջ ամերիկեան ուժերու ներտնտեսութիւնը անհրաժեշտութիւն մը եղած է, սակայն գործողութեան աւարտէն ետք անոնց ներկայութիւնը անիմաստ պիտի ըլլայ:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5053 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱԶԱՐԵԱՆ

Table with 10 columns and 10 rows for the 5053 lottery. Columns are numbered 1-10, rows are numbered 1-10.

Table with 2 columns: ԸՈՐԻՉՈՆԱԿԱՆ (Winning Numbers) and ՈՒՂՈՒՄՆԵԱՑ (Prizes). Lists numbers and corresponding prize descriptions.

Small 10x10 grid table, likely a secondary lottery or game table.

ԹԻԻ 5052 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԵՈՒՄԸ

Table with 2 columns: ՍԱԿԱՐԱՆ (Jackpot) and Պէլլոսթի սակարանին մէջ օտար դրամահիշներու փակման սակագինները հետեւեալներն էին երէկ (Prizes for the 5052 lottery). Lists various prize amounts.

Table with 2 columns: ՈՍԿԻ (Lottery) and Անգլիական մէկ ոսկի (English Gold). Lists prize amounts in gold and dollars.

Table with 2 columns: ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱՄՆԵԹՈՒՂԹԵՐ (Society Lottery) and Գինի Ա. ճշդում Գինի Բ. ճշդում (Wine). Lists prize amounts.